ՊԱՐԶԱՊԵՍ ԱՍԱ՛ ԽՈՍՔԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՂՈՒԿԱՍ 7.1-10

*1 Երբ Հիսուսը վերջացրեց իր բոլոր խոսքերը ժողովրդին, որ
լսում էր, մտավ Կափառնաում: 2 Մի հարյուրապետի ծառա, որ
շատ սիրելի էր նրա համար, հիվանդացած մեռնելու մօտ էր: 3
Նա, Հիսուսի մասին լսելով, հրեաների երեցներից ուղարկեց
նրա մոտ՝ խնդրելով նրան, որ գա, իր ծառային ապրեցնի: 4
Նրանք, Հիսուսի մոտ գալով, նրան թախանձալից խնդրում էին
և ասում. Նա արժանի է, որ այդ նրան անես, 5 որովհետև
սիրում է մեր ազգը և ժողովարանը նա՛ կառուցեց մեզ համար: 6
Հիսուսը գնաց նրանց հետ. երբ տնից արդեն շատ հեռու չէր,
հարյուրապետը նրա մոտ բարեկամներ ուղարկեց՝ ասելով.
Տե՛ր, նեղություն մի՛ կրիր, որովհետև արժանի չեմ, որ **իմ հարկի
տակ մտնես**: 7 Դրա համար էլ ինձ արժանի չհամարեցի քեզ
մոտ գալու: Այլ՝ **խոսքո՛վ** ասա, և **ծառաս կբժշկվի**: 8 Որովհետև
ես էլ իշխանության տակ մարդ եմ և իմ ձեռքի տակ զինվորներ
ունեմ. սրան ասում եմ՝ գնա՛, և գնում է, մյուսին՝ արի՛, և գալիս է,
իմ ծառային՝ այս բա՛նն արա, և անում է: 9 Հիսուսը, այս լսելով,
նրա վրա զարմացավ, դարձավ իրեն հետևող ժողովրդին ու
ասաց. Ասում եմ ձեզ, որ Իսրայելում անգամ այսպիսի հավատ
չգտա: 10 Եվ այն ուղարկված մարդիկ տուն վերադարձան ու
հիվանդ ծառային բժշկված գտան:*

I. ՀԱՎԱՏ ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Որովհետև ես էլ իշխանության տակ մարդ եմ

- *Նախ՝ իշխանության տակ, հետո՝ իշխանության մեջ*

  Ի՞նչ է նշանակում «իշխանության տակ լինել»

  *Ղուկաս 4.6 – Եվ սատանան նրան ասաց. Այս ամբողջ **իշխանությունն** ու սրանց փառքը քեզ կտամ, որովհետև **ինձ է տրված**, և ում ցանկանում եմ, տալիս եմ այն:*

  «Ահա Ես ձեզ իշխանություն եմ տալիս...» (Ղուկաս 10.19)

- *Հարյուրապետը նախ ճանաչում էր, որ ինքն ենթակա է մեկ ուրիշի իշխանությանը, և հենց դա էր նրան տալիս վստահություն հասկանալու Հիսուսի իշխանությունը:*

- *Հոգևոր աշխարհում իշխանությունը չի գործում «պաշտոնի» կամ «ձայնի բարձրության» միջոցով, այլ՝ **հնազանդության միջոցով**:*

  Հնազանդությունը թուլություն չէ, այլ օրինական դիրք:

  *Դրա հակադիր օրինակն է **Սկևայի յոթ որդիները** (Գործք. 19.13–16):*

  Նրանք ասում էին ճիշտ բառերը, բայց չէին ապրում իշխանության տակ:

  Դևը ասաց.

  «Հիսուսին ճանաչում եմ, Պողոսին էլ գիտեմ, բայց դուք ո՞վ եք»

- *Երբ մարդը ապրում է Աստծո **իշխանության տակ**, նա կարող է նաև գործել Աստծո **իշխանության մեջ***

  Եվ հենց դրա համար հարյուրապետը հասկացավ, որ Հիսուսը կարիք չունի գալու.

  Մի Խոսք՝ և բավական է:

II. ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ԲԺՇԿՈՂ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

- ***Պարզապես ասա Խոսքը***

  *Նա **խոսքով հանեց** ոգիներին և <u>բոլոր</u> հիվանդներին բժշկեց (Մատթեոս 8.16–17)*

  Եբր. 4.12 - Որովհետեւ Աստուծո խօսքը կենդանի է և զօրավոր եւ ամեն երկսայրի սուրից ավելի կտրուկ է, եւ թափանցում է մինչեւ շունչի եւ ոգու եւ հոդերի եւ ողնածուծի բաժանվելը. եւ քննում է սրտի մտքերն ու խորհուրդները:

  *Առակաց 4.20-22 – Որդյա՛կ իմ, ուշադի՛ր եղիր իմ **խոսքերին** և ակա՛նջ դիր իմ **ասածներին**: ...Որովհետև նրանք կյանք են դրանք գտնողների համար և բժշկություն՝ նրանց ամբողջ մարմնին:*

- ***Աստծո Խոսքը ունի հստակ նպատակ քո կյանքում***

  Սաղմոս 107.20 – Ուղարկեց իր խոսքը և բժշկեց նրանց և նրանց ազատեց իրենց կորստից:

  Ել. 15.26 – «Ես եմ Տերը՝ քո Բժիշկը»:

- ***Խոսքը երբեք դատարկ չի վերադառնում***

  Եսայի 55.11 – այնպես էլ կլինի իմ բերանից դուրս եկած խոսքը. նա ապարդյուն չի վերադառնա ինձ մոտ, այլ կկատարի իմ փափագը և հաջողություն կունենա այն բանում, ինչի համար ես ուղարկել եմ նրան:

  Երբ Աստված խոսում է, արդյունքը անխուսափելի է:

III.ՅԻՍՈՒՍԸ ԶԱՐՄԱՑԱՎ՝ ՏԵՍՆԵԼՈՎ ՄԵԾ ՀԱՎԱՏՔԸ

9 *Հիսուսը, այս լսելով, նրա վրա զարմացավ...Իսրայելում անգամ այսպիսի հավատ չգտա:*

Հավատքը Աստծուն համոզել չէ:

Հավատքը վստահություն է, որ ***Աստված արդեն խոսել է****:*

10 *Եվ այն ուղարկված մարդիկ տուն վերադարձան ու հիվանդ ծառային բժշկված գտան:*

- *Հրաշքը տեղի ունեցավ հեռավորության վրա, որովհետև խոսքը սահմանափակված չէ տարածությամբ, ժամանակով կամ հանգամանքով:*

ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԵՐ 21-ՕՐՅԱ ԱՂՈԹՔԻ և ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. <u>Ծոմապահությունը</u> մեզ դնում է Աստծո իշխանության տակ

Հակոբոս 4.7 – Արդ հնազանդվե՛ք Աստծուն, դիմադրե՛ք սատանային, ու նա ձեզանից կփախչի:

2. <u>Աղոթքը</u> Աստծո Խոսքի հռչակումն է իշխանության Մեջ

Այս 21 օրերի ընթացքում՝

- *Աղոթեք խոսքով*
- *Հռչակեք խոսքը ձեր տան, մարմնի, եկեղեցու և քաղաքի վրա*

Այլ՝ խոսքո՛վ ասա, և ծառաս կբժշկվի:

Այն նույն խոսքը, որ բժշկեց ծառային՝

այսօր էլ բժշկում է ձեր մարմինները

կոտրում է կապանքներ

վերականգնում է ընտանիքներ

- *Այս 21-օրյա աղոթքի և ծոմապահության մեջ թող մենք լինենք ժողովուրդ, որ ասում է.*

«Տե՛ր, մենք վստահում ենք Քո խոսքին: Պարզապես ասա խոսքը, և դա կկատարվի»:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ